

**LIFE** –«Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության իրթանման միջոցով» ծրագրի

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**  
#17-Ապրիլ, 2016



**USAID**  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



**Save the Children**

LIFE ծրագիրը (2012-2016) իրականացնում է «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

Ծրագրի գործընկերներն են «Ակտիվա» միջազգային հիմնադրամը, «Ունիսոն», «Էյջ-Դի-Փի հիմնադրամ» և «Լիարժեք կյանք» ՀԿ-ները:

Ծրագիրը սերտորեն համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Զբաղվածության պետական գործակալության և զբաղվածության կենտրոնների, հաշմանդամություն ունեցող անձանց և ՀԿ-ների, մարզային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, ծառայություններ մատուցողների, միջին մասնագիտական կրթական հաստատությունների և գործատուների հետ:

**ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ ԿԱՐԴԱՅԵՔ՝**

- ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՏԵՐԱՆՍ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՍՈՂԵԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
- ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԿ-ՆԵՐԻ ՑԱՆՑԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՊԼԱՆ
- ԾՆՈՂ-ԵՐԵԽԱ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ
- ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ԻՄ ՈՒՂԻՆ» ԱՌԻՏԻԶՄ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԵՏ
- ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ LIFE ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄԸ
- ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ
- ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ՝ ՈՉ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



# ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՏԵՐԱՆՍ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄՈՂԵԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փետրվարի 26-ին «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպության LIFE ծրագրի շրջանակներում Երևան քաղաքում անցկացվեց ազգային կոնֆերանս՝ քննարկելու Հաշմանդամություն ունեցող անձանց ներառական մասնագիտական կրթության և զբաղվածության մոդելը:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) հայաստանյան առաքելության տնօրեն Քարեն Հիլլիարդը, ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հակոբ Հակոբյանը և «Մեյվ դը չիլդրեն» հայաստանյան գրասենյակի տնօրեն Արսեն Ստեփանյանը ողջույնի խոսք ուղղեցին միջոցառման մասնակիցներին և կարևորեցին հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացվող և, մասնավորապես, վերջիններիս զբաղվածության խնդիրների լուծմանն ուղղված գործողություններն ու ծրագրերը:

2012 թվականին մեկնարկած LIFE ծրագրի նպատակն է խթանել հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատանքի հավասար պայմանների ստեղծումը և աշխատանքի մատչելիությունը՝ որպես մարդու հիմնարար իրավունք: Ազգային կոնֆերանսը հարթակ հանդիսացավ՝ կիսելու LIFE ծրագրի ձեռքբերումները, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատաշուկայում ինտեգրման մոդելը, քաղված դասերը, նախնական/արհեստագործական և միջին մասնագիտական (ՄԿՈՒ) ուսումնական հաստատությունների, ինչպես նաև հանրային-մասնավոր համագործակցության հաջող օրինակները, որոնք նպաստել են հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությանը: Կոնֆերանսը նաև օգնեց վեր հանել այն բացթողումները, որոնք պետք է լրացվեն՝ նպաստելու հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատանքի հետագա հնարավորությունների ստեղծմանը և աշխատանքային և սոցիալական միջավայրում նրանց ինտեգրմանը:

Կոնֆերանսին ներկա գտնվեցին պետական և բիզնես կառույցների, միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների, ինչպես նաև ԶԼՄ-ների ավելի քան 120 ներկայացուցիչներ և հաշմանդամություն ունեցող անձինք:



## ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԿ-ՆԵՐԻ ՑԱՆՑԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՊԼԱՆ

LIFE ծրագրի շրջանակներում 2015 թ. սեպտեմբեր ամսին հիմնվեց հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող ՀԿ-ների ցանց (ՀԿ ցանց): Ցանցի նպատակն է բարձրացնել այդ ՀԿ-ների կազմակերպական կարողությունները՝ խթանելու հաշմանդամության ոլորտում համապարփակ բարեփոխումների հաստատումը, ինչպես նաև տեղական, տարածաշրջանային և ազգային կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծման գործընթացում:

Ներկայումս, Ցանցի անդամ են հանդիսանում LIFE ծրագրի տարբեր բաղադրիչներում ընդգրկված 20 կազմակերպություններ: 2015 թվականին LIFE ծրագրի կողմից նախաձեռնած «Խտրականությունը ՉԻ աշխատում» համապետական քարոզարշավի շրջանակներում ՀԿ ցանցի անդամներն իրականացրեցին հանրային իրազեկման բազմաթիվ միջոցառումներ և գործողություններ՝ ի պաշտպանություն հաշմանդամություն ունեցող անձանց շահերի:

Քարոզարշավը ցույց տվեց, որ խիստ կարևոր է դառնում ունենալ համապարփակ մոտեցում, երկրի ողջ տարածքում իրականացնել հզոր շահերի պաշտպանության հիմնավոր գործողություններ՝ ՀԿ ցանցի ցանցային և ռեսուրսների մոբիլիզացման հիմնությունների միջոցով: Ուստի 2016 թվականի փետրվար ամսին LIFE ծրագիրը նախաձեռնեց աշխատանքային հանդիպում՝ ՀԿ ցանցի համար շահերի պաշտպանության երկարաժամկետ պլան մշակելու նպատակով:

Հավատարիմ լինելով իր առաքելությանը, այն է՝ բարելավել Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց կեսամակարդակը՝ շահերի պաշտպանության, զբաղվածության ապահովման և կարողությունների զարգացման միջոցով, ՀԿ ցանցը սահմանեց հետևյալ ռազմավարական նպատակները.

- Խթանել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը՝ հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների անդամների, գործատուների և պետական կառույցների հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային կարողությունների և իրավունքների մասին իրազեկության մակարդակի բարձրացման և կարողությունների զարգացման միջոցով:
- Նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատելու իրավունքին վերաբերող օրենսդրական դաշտի բարելավմանը՝ քաղաքականության վերահսկման և օրենսդրական բարեփոխումների առաջադրման միջոցով:
- Նպաստել ցանցի կարողությունների զարգացմանը, ինչպես առանձին անդամ կազմակերպությունների, այնպես էլ ամբողջական ցանցի:

Շահերի պաշտպանության երկարաժամկետ պլանը նաև ներառում է Ցանցի ռեսուրսների քարտեզագրում, գործողությունների պլան և մեկ տարվա համապարփակ բյուջե:

## ԾՆՈՂ-ԵՐԵՒԱ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների վերաբերյալ երեխաների և ծնողների իրազեկությունը բարձրացնելու և երեխաների ակնկալիքների վերաբերյալ ընտանիքի աջակցությունն ապահովելու նպատակով LIFE ծրագիրը շարունակում է իր թիրախային խմբում դիտարկել ուսուցման հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:

Հունվարից ապրիլն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում, Արարատի, Գեղարքունիքի, Շիրակի, Լոռու, Արագածոտնի, Սյունիքի, Վայոց Ձորի և Կոտայքի մարզերում անցկացվեցին ծնող-երեխա խմբային 27 հանդիպումներ, որոնց նպատակն էր հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ծնողներին տեղեկացնել մասնագիտական կրթության և զբաղվածության հնարավորությունների, պետության կողմից ֆինանսավորվող կրթական հնարավորությունների և աշխատանքի տեղավորման ծառայությունների մասին: Նախաձեռնության կայունությունն ապահովելու նպատակով ներառական կրթության գործընթացում ներառված համապատասխան կրթական հաստատությունների ուսուցիչները (հատուկ մանկավարժներ, ֆիզիոլոգներ, սոցիալական աշխատողներ, լոգոպեդներ) նույնպես մասնակցում էին հանդիպումներին:

Ծնող-երեխա խմբերի համար կարիերայի կողմնորոշումն իրականացվում է LIFE ծրագրի շրջանակներում Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի կողմից մշակված Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման թեստավորման ծրագրի միջոցով:

Հանդիպումների ընթացքում ծնողներին և երեխաներին է տրամադրվում նախնական/արհեստագործական և միջին մասնագիտական (ՄԿՈԻ) ուսումնական հաստատություններում ուսանելու հնարավորությունների մասին տեղեկատվություն (ՄԿՈԻ հաստատությունների և մասնագիտությունների ցանկ):

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ԻՄ ՈՒՂԻՆ» ԱՌԻՏԻԶՄ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԵՏ

Հայաստանում աուտիզմ ունեցող երեխաների և չափահասների զարգացման, կրթության և զբաղվածության հարցերը լուծելու նպատակով՝ սկսած 2016 թ. մարտ ամսից «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության LIFE ծրագիրը ֆինանսական աջակցություն է տրամադրում «Իմ ուղին» աուտիզմ ունեցող դեռահասների և երիտասարդների սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնի գործունեությանը, որի շրջանակներում աուտիզմ ունեցող դեռահասների և երիտասարդների համար նախատեսվում է մշակել մասնագիտական ուսուցման ծրագիր՝ ըստ տարիքային խմբերի:

Համագործակցության շրջանակներում Կենտրոնը անցկացրեց կանոնավոր սեմինարներ և աշխատանքային հանդիպումներ 40 դասընթացավարների հետ հետևյալ թեմաներով՝ Աուտիզմ և հաղորդակցման ոլորտի այլ խանգարումներ ունեցող երեխաների բուժում և ուսուցում, Վարքի խոսքային միջամտություն, Ֆունկցիոնալ վարք, Կիրառական վարքային վերլուծություն և այլն:

Ավելին, բոլոր 40 մասնակիցների համար ուսուցման գործընթացը կազմակերպվեց «Իմ ուղին» վերականգնողական կենտրոնում: Կենտրոնի առաջատար մասնագետների կողմից

յուրաքանչյուր մասնակցի համար մշակվեցին երիտասարդների հետ հաղորդակցման վերաբերյալ դասընթացների անհատական ժամանակացույցեր:

Մինևույն ժամանակ, «Իմ ուղին» վերականգնողական կենտրոնի առաջատար մասնագետները սկսեցին դիտարկել նոր շահառուների/երիտասարդների ներգրավումը, որպեսզի նոր ընտրված մասնագետները սկսեն աշխատել նաև նոր շահառուների հետ:

Ծրագրի ընթացքում նախատեսվում է, որ «Իմ ուղին» կենտրոն հաճախող աուտիզմ ունեցող 25 դեռահասներ, իսկ հեռահար ծրագրերում՝ 100 դեռահասներ և երիտասարդներ, հնարավորություն կունենան ստանալ սոցիալ-վերականգնողական և մասնագիտական ուսուցման անվճար ծառայություններ:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ LIFE ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄԸ

2015 թվականին LIFE ծրագիրը նախաձեռնեց Սոցիալական ձեռնարկատիրության փորձառության փաստաթղթավորումը, որը նպատակ ուներ ներկայացնել ծրագրի շրջանակներում ստեղծված 18 սոցիալական ձեռնարկությունների փորձը՝ վերլուծելով սոցիալական ձեռնարկատիրության մոդելի հաջողություններն ու մարտահրավերները:

Վերլուծությունը կատարվել է «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպության LIFE ծրագրի թիմի կողմից: Այն գնահատում է սոցիալական ձեռնարկատիրության մեջ ներգրավված ՀԿ-ների, քաղաքապետարանների, բիզնես կառույցների և անհատ ձեռներեցների ներգրավվածության առավելություններն ու թերությունները՝ այդ ձեռնարկությունների արդյունավետությունը, նրանց շահավետությունը մասնավոր հատվածի, գործատուների և հաշմանդամություն ունեցող անձանց տեսանկյունից, ինչպես նաև գործարարներին հանդիպած իրավական խոչընդոտները:

Սոցիալական ձեռնարկատիրության փորձառությունը հասցեագրված է ՀՀ կառավարությանը, միջազգային և տեղական կազմակերպություններին, գործատուներին և սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվող կազմակերպություններին: Այն նպատակ ունի աջակցել Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրության կայուն համակարգի ստեղծմանը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավմանը և ինտեգրմանը աշխատավայրում:

Փաստաթուղթը ներկայացնում է սոցիալական ձեռնարկության ղեկավարման վերաբերյալ նկատառումներ և գործնական խորհրդատվություն, տեսական հայեցակարգ՝ ուղղված դաշտի կարգավորմանը, ինչպես նաև օրենսդրական բարեփոխումների որոշ առաջարկներ:

Փաստաթուղթը շրջանառվել է Սոցիալական ձեռնարկությունների և գործատուների Ցանցի անդամների շրջանում և քննարկվել է Ցանցի հերթական հանդիպման ընթացքում:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար ավելի են մեծանում շահավետ զբաղվածություն գտնելու հնարավորությունները, երբ նրանք համապատասխան մասնագիտական կրթության միջոցով ստանում են օգտակար գիտելիքներ, ինչպես նաև մասնագիտական և սոցիալական հմտություններ: Մյուս երիտասարդների համար սոցիալական և մասնագիտական կրթությունը կարևոր է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաների և մեծահասակների կյանքը բարելավելու համար:

Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կրթական պահանջներին ճիշտ արձագանքելու համար «Մեյվ դը չիլդրենը» նախաձեռնեց և սկսեց իրականացնել երկու այլ ծրագրեր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենսամակարդակի բարելավմանը:

**«Մասնագիտական կրթություն և զբաղվածություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար» ծրագիր (2016-2017 թթ)**

Եվրամիության կողմից ֆինանսավորվող այս ծրագիրը իրականացվում է «Մեյվ դը չիլդրեն»-ի կողմից «Մասնագիտական կրթության բարեփոխումներ» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագիրը սերտորեն համագործակցում է ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, LIFE ծրագրի շրջանակներում ստեղծված Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող և Սոցիալական ձեռնարկությունների և գործատուների ցանցերի, ինչպես նաև ՄԿՈՒ հաստատությունների հետ:

Ծրագրի ընդհանուր նպատակն է նպաստել Հայաստանի ՄԿՈՒ ոլորտում սոցիալական նորարարությունների ներմուծմանը՝ խթանելու հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար աշխատանքի հավասար հնարավորությունների ստեղծումը՝ որպես մարդու հիմնարար իրավունք, և ապահովելու առաջընթաց: Ծրագիրն իրականացվում է Երևան քաղաքի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Վայոց Ձորի, Մյուսիքի և Տավուշի մարզերում և բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- ՄԿՈՒ հաստատությունների, ինչպես նաև հատուկ/գիշերօթիկ դպրոցների ուսուցիչների կարողությունների զարգացում
- Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների հետ մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ
- Աջակցություն երկարաժամկետ և կարճաժամկետ մասնագիտական կրթությանը
- ՄԿՈՒ հաստատությունների հիմքի վրա սոցիալական ձեռնարկությունների հիմնում, որը հնարավորություն կտա զբաղվածությամբ ապահովել մասնագիտական կրթություն և վերապատրաստում անցած հաշմանդամություն ունեցող երիտասարդներին:

Ակնկալվում է, որ ծրագրի արդյունքում շահառու կհանդիսանան ՄԿՈՒ 46 հաստատություններ և հաշմանդամություն ունեցող 400 երիտասարդներ:

**Համայնքահեն ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար ծրագիր (2016-2018 թթ)**

Ծրագիրը նախատեսում է էապես բարելավել հաշմանդամություն ունեցող երեխաների համար տրամադրվող ծառայությունների որակը՝ համագործակցելով պետական կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքահեն հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կառույցների հետ:

Ծրագիրը իրականացվելու է Եվրոպական 5 երկրներում՝ Հայաստանում, Վրաստանում, Կոստա Ռիկայում, Ալբանիայում, Բոսնիա և Հերցեգովինայում, և ունենալու է հետևյալ հիմնական ուղղությունները.

- Նպաստել և խթանել հաշմանդամություն ունեցող երեխաների կարողությունների, ինքնուրույնության հմտությունների զարգացմանն ու հասարակությունում ներառմանը:
- Աջակցել ծնողներին՝ նպաստելով րնտանիքների ամրապնդմանը:
- Մոբիլիզացնել համայնքի շահագրգիռ կողմերին և կառույցներին՝ հաշմանդամություն ունեցող երեխաների համար որակյալ ծառայությունների մատուցումը խթանելու նպատակով:

Հայաստանում Ծրագիրը կիրականացվի «Լիարժեք կյանք» և «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Երևան և Արմավիր քաղաքներում կհիմնվեն ցերեկային խնամքի կենտրոններ՝ հաշմանդամություն ունեցող 0-18 տարեկան երեխաների ու իրենց ծնողների համար: Այս երկու կենտրոններում Երևանից, Արմավիրի և Արագածոտնի մարզերից հաշմանդամություն ունեցող 300 երեխաներ հնարավորություն կունենան ստանալ որակյալ ծառայություններ:

## ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ՝ ՈՉ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչի՞ մասին ենք սովորաբար ակնկալում լսել հաշմանդամություն ունեցող անձանցից: Ինչպիսի՞ գործողություններում են նրանք ավանդաբար ընդգրկվում: Ո՞ր ոլորտում է սովորաբար օգտագործվում նրանց փորձառությունը: Եվ ընդհանրապես, ո՞ր թեմայի հետ են հաշմանդամություն ունեցող անձինք սովորաբար ասոցացվում: Բոլոր այս հարցերը մեկ պատասխան ունեն՝ «հաշմանդամություն»: Չնայած ամեն օր անցկացվող միջոցառումների, գործողությունների և նախաձեռնությունների թեմատիկ բազմազանությանը, հաշմանդամները հիմնականում մասնակցում են բացառապես հաշմանդամությանը վերաբերող գործունեությանը:



Իրենց հարցերին առնչվող նախաձեռնություններին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը միանշանակ առաջընթաց է ի համեմատ նախկին իրավիճակին, երբ հաշմանդամությանը վերաբերող ծրագրերն անցկացվում էին առանց հաշմանդամների մասնակցության և կենսական որոշումներ էին կայացվում առանց նրանց կարծիքները հաշվի առնելու: Ի տարբերություն նախկինում գործող մոտեցումներին, այժմ հաճախ կիրառվում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների միջազգային շարժման «Ոչինչ մեր մասին՝ առանց մեզ» սկզբունքը: Հաշմանդամություն ունեցող անձինք դիտարկվում են որպես այդ ոլորտի փորձագետներ և ներգրավվում են հաշմանդամությանը վերաբերող տարբեր քննարկումներում, համաժողովներում և հեռուստահաղորդումներում՝ հանդես գալով որպես ուսուցանողներ, խոսնակներ կամ խորհրդատուներ:

Բայցևայնպես, հաշմանդամների մասնակցության սահմանափակումը միմիայն հաշմանդամությանը վերաբերող ծրագրերի շրջանակներում և նրանց ներուժի կիրառումը բացառապես այս կոնտեքստում վերահաստատում է հաշմանդամություն ունեցող անցանց հանրային ընկալումը որպես «սահմանափակ» կարողություններ ունեցող անձինք և թյուր կարծիք է ձևավորում նրանց ունակությունների, մասնագիտական փորձի և ընդհանուր ներուժի վերաբերյալ: Իրականում հաշմանդամները, ինչպես հասարակության բոլոր անդամները, տիրապետում են հմտությունների, գիտելիքների և փորձառությունների լայն բազմազանության, որը կարող է և պետք է գործի դրվի հասարակության ընդհանուր զարգացման համար:

Այս համոզմունքն էր, որ խթան հանդիսացավ «Ունիսոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Արի ընկերանանք» կամավորական նախաձեռնության համար: Ծրագիրն իրականացվում է 7 կամավորներից բաղկացած խմբի կողմից, որոնցից 5-ը LIFE ծրագրում ընդգրկված հաշմանդամություն ունեցող երիտասարդներ են՝ Մերին և Գոհարը ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունում աշխատանքի են տեղավորվել «Ունիսոն» ՀԿ օգնությամբ, Տիգրանուհին և Հայկը «Աշխատանքի պատրաստվածություն և անկախ կյանքի հմտություններ» թրենինգի և հոգեբանական դասընթացների մասնակիցներ են, իսկ Լուիզան «Ունիսոնի» թիմի անդամ է և LIFE ծրագրի շրջանակներում պատասխանատու է կույր շահառուների հետ աշխատանքի համար:

Ծրագրի գաղափարը հետևյալն է՝ կամավորական խումբը այցելում է դպրոցներ և ելույթ-քննարկումներ է անցկացնում հաշմանդամությանը չառնչվող տարբեր թեմաների վերաբերյալ՝ արվեստ և մշակույթ, արտակարգ իրավիճակներ, շրջակա միջավայր և էկոլոգիա, առողջություն և հիգիենա, սոցիալական ակտիվիզմ... Ծրագիրը երկու առանձին նպատակներ է հետապնդում: Նախ, այն ուղղված է սոցիալական կարևորագույն թեմաների շուրջ կրտսեր սերնդի շրջանում կառուցողական դիսկուրսի առաջացմանը՝ բարդ խնդիրները հասցեագրելով տեղեկատվության հետաքրքրաշարժ մատուցման, ինտերակտիվ գործողությունների և գրավիչ տեսաձայնային նյութերի միջոցով: Երկրորդը՝ ծրագիրը



նպատակ ունի հաշմանդամություն ունեցող անձանց նոր և անսպասելի դերում դիրքավորել և ներկայացնել նրանց որպես հասարակության՝ արժեքավոր գաղափարներ ունեցող և ակտիվ անդամներ, այդպիսով նրանց վերաբերյալ դրական ընկալում ձևավորելով երեխաների, ինչպես նաև նրանց ծնողների և ուսուցիչների շրջանում:

Մեկամսյա նախապատրաստական ժամանակահատվածից հետո, որի ընթացքում կամավորական խումբը դասընթացավորման հմտություններ ձեռք բերեց, ընտրեց էլույթ – քննարկումների թեմաները, մշակեց

խաղեր և վարժություններ և պայմանավորվածություններ ձեռք բերեց դպրոցների հետ, առաջին այցը տեղի ունեցավ ապրիլի սկզբին: Լսարանի հետ ժամանակի ընթացքում ամուր կապ ստեղծելու և աշակերտներին տեղեկատվությամբ ծանրաբեռնելուց խուսափելու համար որոշվեց յուրաքանչյուր էլույթ-քննարկումը երկու մասի բաժանել և յուրաքանչյուր լսարանի հետ երկու անգամ հանդիպել:

Կամավորական խմբին առաջինը հյուրընկալեց Երևանի Միամանթոյի անվան թիվ 162 միջնակարգ դպրոցը, որտեղ «Արի ընկերանանք» ծրագրի հանդիպումներին մասնակից եղան մոտ 40 ունկնդիրներ՝ հինգերորդ դասարանի աշակերտներ, նրանց ուսուցիչները և դպրոցի տնօրինությունը:

Երկու հանդիպումները մեծ հաջողություն ունեցան՝ աշակերտները ավելին քան ոգևորված էին իրենց ավանդական դասերի փոխարեն ուշագրավ քննարկմանը մասնակցելու գաղափարով և պատրաստակամորեն կիսվում էին վարողների կողմից բարձրացված հարցերի շուրջ իրենց կարծիքներով և տեսակետներով: Երեխաները հատկապես մեծ ակտիվությամբ էին մասնակցում դերային խաղերին, իրավիճակների խաղարկումներին և ինտերակտիվ այլ վարժություններին, և, ինչպես հետագայում նշվեց ուսուցիչների կողմից, նույնիսկ ամենահինքնամփոփ և սովորաբար լուռ երեխաները լիովին ներգրավված էին: Երկու հանդիպումների արդյունքում այնպիսի ընկերական հարաբերություն էր ստեղծվել լսարանի հետ, որ աշակերտներն անգամ երգի և պարի հանպատրաստից համերգ կազմակերպեցին կամավորական խմբին իրենց երախտագիտությունը հայտնելու համար:

Ի լրումն ծրագրի երկու նպատակների իրականացմանը՝ երեխաների շրջանում կարևոր խնդիրների խթանմանը և հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ նոր ընկալման ստեղծմանը, հանդիպումները վկայակոչեցին մի կարևոր փաստ՝ ոչ ոք չի ծնվում կարծրատիպային վերաբերմունքով և մոտեցումներով: Այն, որ հանդիպման վարողները տեսանելի հաշմանդամություն ունեն, բոլորովին խնդիր չէր երեխաների համար՝ նրանցից ոչ ոք չէր «նկատում» հաշմանդամությունը: Այն դեպքում, երբ չափահասները հավանաբար կույր և անվասայլակով տեղաշարժվող անձանց կտեսնեին, երեխաները տեսնում էին ազգային պարերի գիտակ պատմաբան և «կայֆ» համազգեստով (երեխաների բնորոշմամբ) 911 օպերատոր: Մա մի բան է նշանակում՝ խտրականությունը ի ծնե չէ, այն ձեռքբերովի է: Ծնողների և ուսուցիչների կողմից փոխանցվող, զանգվածային լրատվությամբ քարոզվող և ամենատարբեր փաստաթղթերի և համակարգերի միջոցով գործի դրվող կարծրատիպային կարծիքները, ընկալումներն ու մոտեցումներն են, որ հանգեցնում են խտրականության, և «Արի ընկերանանք» ծրագրի պես նախաձեռնություններով է, որ այս խտրականությունը կարելի է ոչ միայն կանխել, այլ վերջնականապես արմատախիլ անել:

*Նյութը պատրաստեց Անի Ասատրյանը*



LIFE ծրագրի մեկնարկից՝  
2012թ. հունվարից մինչ օրս հաշմանդամություն ունեցող

**653 անձ**

տեղավորվել է աշխատանքի

*Ի գիտություն հետազոտողների, հասարակական և մասնավոր սեկտորի. ՏԵՂԵԿԱԳԻՐԸ հնարավորություն է տալիս լուսաբանել հաշմանդամության ունեցող անձանձ ուղղված ծրագրերը/հետազոտությունները: Հետաքրքրվածության դեպքում կարող եք դիմել LIFE ծրագրին [astghik.mailyan@savethechildren.org](mailto:astghik.mailyan@savethechildren.org) էլ. հասցեով:*

LIFE ՏԵՂԵԿԱԳԻՐԸ պատրաստվում է ԱՄՆ ՄՁԳ Ֆինանսավորմամբ իրականացվող LIFE ծրագրի շրջանակներում: Տեղեկագրում արտահայտված տեսակետները հեղինակներինն են և կարող են չարտացոլել ԱՄՆ ՄՁԳ-ի կամ «Մեյվ դը չիլդրենի» տեսակետները:



**Save the Children**

«Մեյվ դը չիլդրենը» երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ամենամեծ կազմակերպություններից է աշխարհում: Այն ներառում է 29 ազգային կազմակերպություններ, որոնք գործում են ավելի քան 120 երկրներում:

«Մեյվ դը չիլդրեն ինթերնեյշլ»-ի հայաստանյան ներկայացուցչություն  
Հայաստան, Երևան 0014, Ազատության պող. 27, 3-րդ հարկ  
Հեռ.՝ (374-10) 20-10-14, 20-10-25, 20-10-29; Ֆաքս՝ (374-10) 20-12-29  
Էլ. փոստ՝ [Armenia@savethechildren.org](mailto:Armenia@savethechildren.org)  
Վեբ կայք՝ [www.savethechildren.net](http://www.savethechildren.net); [www.life-disability.am](http://www.life-disability.am)

